

Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

ԱՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության 2020թ. կատարած աշխատանքների մասին

Նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից 2020թ. լրիվ կամ մասնակի ստուգումներ է իրականացվել հանրապետության տարածքում գործող 28 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 7 բյուջետային հիմնարկներում, 10 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 7 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 3 գյուղական համայնքներում և 1 անհատ ձեռնարկատիրոջ մոտ:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 73207.4 հազ.դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- բյուջե պակաս հաշվարկված գումարներ՝ 860.0 հազ.դրամ,
- անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 45136.2 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 44456.7 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին 679.5 հազ.դրամ,
- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 10502.2 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե,
- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր՝ 244.9 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե,
- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 334.2 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 269.3 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին 64.9 հազ.դրամ,
- նորմերի խախտումներ՝ 651.3 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե,
- գերաձախ՝ 70.8 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 14.4 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին 56.4 հազ.դրամ,
- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 15304.1 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման ձեռնարկության հաշվին 2543.8 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 12760.3 հազ.դրամ,
- պակասորդ՝ 103.7 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման ձեռնարկության հաշվին:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 56998.8 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 3448.3 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 12760.3 հազ.դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 73207.4 հազ.դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 13236.4 հազ.դրամ, որից՝ պետական բյուջե՝ 249.0 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 227.1 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 12760.3 հազ.դրամ:

Ապառքի գումարները կազմում են 59971.0 հազ.դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 56749.8 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 3221.2 հազ.դրամ:

Պետական բյուջե չվերականգնված գումարները հիմնականում «Ասկերանի շրջանի պետական հանրակրթական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ի և «Կառավարում» ՓԲԸ ստուգմամբ հայտնաբերված գումարների ապառքներն են:

Նախորդ՝ տարիներում կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2020թ. պետական բյուջե է վերականգնվել/վերաձևակերպվել 2720,0 հազ.դրամ և հաշվառումով վերաձևակերպվել է 2715.3 հազ.դրամ:

Ընդամենը 2020թ. պետական բյուջե է վերականգնվել 2969.0 հազ.դրամ, որից 2020թ. արդյունքներով 249.0 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 2720.0 հազ.դրամ: 2020թ. արդյունքներով ձեռնարկության հաշվին է վերականգնվել 227.1 հազ.դրամ: 2020թ. հաշվառումով վերաձևակերպված գումարները կազմել են 15475.6 հազ.դրամ, որից 2020թ. արդյունքներով 12760.3 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 2715.3 հազ.դրամ:

Ստուգման արդյունքներով չորս հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԱՀ քննչական կոմիտե և մեկը՝ ԱՀ ոստիկանություն: